

ԱՐՊՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՈՉ ՄԻԱՅՆ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ԱՌՑԱՆՑ ԴԱՍ-ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ, ԱՅԼԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐՆ ԵՆ ԱՆՈՒՄ

«Լրագրություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի էլինա Չակոբյանի գրուցակիցն է ԱրՊՅ բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Հայրապետյանը, ով նաև Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի է: Թեման՝ արվեստ, թատրոն, ուսանողական կյանք և, իհարկե, կյանքը՝ «մեա տանը» իրավիճակում:



Թատրոնը Լիլիթի համար ապրում է, կենսածև, իր ողջ կյանքի սերն է: Ըստ նրա՝ դերասանը նախ և առաջ պետք է լինի անկեղծ ինքն իր հետ, որպեսզի կերպարը ճիշտ ստեղծվի: Լիլիթի համոզմամբ՝ բեմը դերասանի «ռենտգենն» է:

Լիլիթ, ինչպե՞ս և ո՞ր տարիքում հասկացար, որ հենց թատրոնն է քոնը:
-Գիտե՞ք, երբ մարդ ծնվում է, Աստված նրա մեջ լույս է դնում, իսկ դա գտնելու ճանապարհը դրվում է մարդու առջև, որն էլ միայն զգալով՝ պիտի առաջնորդվես: Ես դեռ մանկուց եմ զգացել, որ թատրոնն է իմը, ես ծնվել եմ որպեսզի լինեմ թատրոնում: Մասնագիտությունը ընտրում եմ գիտակցաբար՝ կենսակերպ ապահովելու համար: Իսկ այն ընկալելու համար անհրաժեշտ է սեր և նվիրվածություն:

Քանի՞ տարի է, որ աշխատում ես Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, և ի՞նչ տվեց քեզ՝ որպես սկսնակ դերասանի:

Իմ երազանքներից ամենանվիրականը մայր թատրոնի բեմում խաղալն էր և 4-րդ տարին է, ինչ փոքրիկ քայլերով գնում եմ դեպի իմ երազանքը:

Թատրոնում աշխատելու հետ համատեղ նաև սովորում ես Արցախի պետական համալսարանում: Դերասանական կրթություն ստանալու ցանկություն կամ մտադրություն չունե՞ս:

Դերասանական կրթությունը մեզ միայն գիտելիքներով է զինում, ինչն էլ որպես արվեստագետ կայանալու հարցում կարևոր դեր ունի, բայց իմ կարծիքով այն քեզ տաղանդ, շնորհ չի տալիս: Ունեմ մտադրություն սովորելու, բայցև ուզում եմ, որ իմ Արցախն ունենա այնքան ուժեղ կրթական համակարգ, որ անհրաժեշտություն չլինի արտերկրում սովորելու: Ես հավատում եմ և վստահ եմ, որ կունենանք թատերական ինստիտուտ:

Թատրոնը Լիլիթ Հայրապետյանի համար...
-Թատրոնը ինձ համար աշխատանք չէ, այլ ապրում, կենսածև, ես շնչում եմ թատրոնով, ապրում թատրոնով: Թատրոնը սերն է ողջ իմ կյանքի:

Հիշու՞մ ես արդյոք, թե որն էր քո կերտած առաջին դերը և ի՞նչ ապրումներ ունեիր այդ պահին:

Թատրոնում իմ առաջին կերպարը եղել է «Հարսնացուն փեսացու է փնտրում» կատակերգությունում, որտեղ խաղում էի Արմենուհու դերը: Ամեն

անգամ բեմ մտնելիս նույն ապրումներն եմ ունենում, կարծես առաջին անգամն է:

Ըստ քեզ՝ ինչպիսի՞ն պետք է լինի իսկական դերասանը իր ելույթում:

-Ասում եմ՝ դերասանը պետք է ունենա զինվորականի կարգապահություն, ես էլ ավելացնեմ դրան, որ դերասանը, ամենակարևորը, պետք է լինի անկեղծ ինքն իր հետ, որպեսզի կերպարը ճիշտ ստեղծվի, բեմը դերասանի «ռենտգենն» է:

Քո կողմից մինչև օրս մարմնավորած կերպարներից ո՞րն ես առածնացնում, և ո՞րն ունի նմանություն քեզ հետ:

Ինձ բաժին հասած յուրաքանչյուր դերի յուրովի եմ մոտենում, ցուցաբերում առանձնահատուկ վերաբերմունք, լինի գլխավոր, թե երկրորդ պլանի: Բայց իմ խաղացած դերերից կառանձնացնեմ «Լուսաբացից առաջ» ներկայացման մեջ Անիի կերպարը, որն ինձ համար առավել պատասխանատվություն կրող կերպար է, որն էլ քիչ մասն է Լիլիթին: Յուրաքանչյուր դեր ստանալով՝ փորձում եմ զուգահեռներ տանել ստեղծվող ու իմ կերպարի միջև:

Թատրոնն Արցախում ապագա ունի՞:

Ցանկացած հզոր երկրի հիմքում զարգացած մշակույթն է: Մի երկրում որտեղ չկա մշակույթ, առհասարակ՝ թատրոն, այդ երկիրը լուսավոր ապագա չունի, հոգեպես աղքատ կլինի:

Կյանքի կարգախոս, որով առաջնորդվում ես:

-Միշտ արա այն, ինչ սիրում ես, այլապես կյանքդ իմաստ չի ունենա:

Ներկայումս ի՞նչ գործունեություն ես ծավալում:

-Ակտիվ կենսակերպ վարող մարդու համար մի քիչ դժվար է տանը մնալ: Հաշվի առնելով, թե ինչ է կատարվում աշխարհում, բնությունն, ասես, մարտահրավեր է նետել մարդկությանը: Փորձում եմ օրս ավելի արդյունավետ դարձնել: Դասերի, աշխատանքի պատճառով չեմ հասցնում շատ գրքեր կարդալ, ֆիլմեր դիտել, տանը ինչ-որ գործ անել: Ուզում եմ այս ամենը շուտ ավարտվի, մայր երկիրը առողջանա: Կյանքում ամեն ինչից պետք է լավը վերցնել՝ մարդիկ կսկսեն գնահատել միմյանց, ժամանակը ավելի արդյունավետ կօգտագործեն:

Հարցազրույցը՝ էլինա Չակոբյանի




Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը: ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ
№ 2
ՄԱՐՏ- ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ
2020

Քո ժամանակը

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌՑԱՆՑ ԴԱՍ-ԿՈՆՖԵՐԱՆՍ՝ ՆԿԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ 105-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Հայոց ցեղասպանության 105-րդ տարելիցին նվիրված մի շարք միջոցառումներ կորոնավիրուսի համավարակի պատճառով Արցախի Հանրապետությունում չեղարկվել են: Թեմայի շուրջ հանդիպումներ ու քննարկումներ կազմակերպելու համար համալսարանականները այլընտրանքային մի շարք ուղիներ են գտել:



րոպեից հետո արդեն ավանդական դարձած քննարկումներն էին:

Դաս-կոնֆերանսի մասնակիցները հաստատել են, որ լսարանից առցանց տիրույթ տեղափոխվելով՝ ապրիլի 24-ի գաղափարը չի փոխվում:

105 տարի առաջ տեղի ունեցած ոճրագործությունն են հիշել, խոսել դրան հաջորդած

Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Նունե Սարումյանը Zoom հարթակի միջոցով նախաձեռնել է առցանց դաս-կոնֆերանս՝ նվիրված Հայոց ցեղասպանության 105-րդ տարելիցին: Դաս-կոնֆերանսին մասնակցում էին ուսանողներ և բուհի շրջանավարտներ:

Նախքան քննարկումներին ու զեկույցներին անցնելը՝ միջոցառման կազմակերպիչ Նունե Սարումյանը առաջարկել է մեկ րոպե լռությամբ հարգել 1.5 միլիոն անմեղ զոհերի հիշատակը: Լռության

ՀԱՂԹԱՆԱԿԸ ԳԵՆԻ ՄԵՋ Է

«Լուսաբացին, երբ արդեն ազատագրվել էր Շուշին, մենք դուրս եկանք մեր տան մոտ գտնվող բլրակը և նայեցինք դեպի այն կողմը, որտեղ գտնվում էր քաղաքը: Հրանոթների ծայները լռել էին, օդ էին բարձրանում լուսավոր համազարկեր, և այդ ամենի միակ վկան պարզկա լիալուսինն էր, որը երկնքից ընկերակցում էր մեր բերկրանքին», - հիշում է մայրս:

Եվ անասելի հպարտությամբ պատմում մեզ, թե ինչպիսի զգացողություններ են ունեցել այդ օրերին: Պատմում է, և արյունս սկսում է եռալ երակներումս, սրտիս զարկերն արագանում են, հոգիս համակվում է հպարտությամբ, և հայացքս, արծվի կերպարանք ստանալով, սլանում է դեպի ժողովրդիս պատմական անցյալը: Մերք գնում է Ավարայրի հրակեղ դաշտը, տեսնում, թե ինչպես են հավերժանում մեր հայրենապաշտ հերոսները, մեր մայրերն աղոթում հայրենի՝ առերեսվելով կրակապաշտություն հետ, և մնում բարոյապես հաղթած: Մերք ճախրում է Սարդարապատի լազուր երկնքում՝ հպարտանալով կերտած անկախությամբ: Մերք գնում է Բեռլին, վերևից հետևում, թե ինչպես են մեր պապերը խրոխտ ու խելակորույս պարում հայկա-

գործողությունների մասին: Մի շարք պետություններ այսօր ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, ճանաչողների կողքին, սակայն, այսօր էլ դեռևս կան ժխտողական քաղաքականության ջատագովներ:

Կազմակերպված դաս-կոնֆերանսին մի շարք ուսանողներ հանդես են եկել զեկույցներով՝ ներկայացնելով մեկդարյա պատմություն ունեցող ոճրագործության պատճառները և ունեցած հետևանքները: Եզրակացությունը մեկն է՝ 105 տարի անց էլ սերունդները հիշում և պահանջում են:

Արմինե Պետրոսյան, «Քաղաքագիտություն», 4-րդ կուրս



«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գրչի 5: 7եռ.՝ (047) 94 04 91

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՋՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Ալյոնա Իսրայելյան, լրագրություն՝ 3-րդ կուրս

Լուսինե Օհանջանյան, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս

